Լուկիանով - Գոքս Հանդիպումը եւ Ղարաբաղի Հարցը

Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդի Նախագահ Անատոլի Լուկիանովը Յունիսի 13 ին Լոնդոնում հանդիպեց Անգլիոյ խորհրդարանի փոխ ատենապետուհի Բարոնուհի Գարոլին Գոքսի հետ: Գոքսը վերջերս գտնուել էր Հայաստանում եւ մօտիկից ծանօթացել Ղարաբաղի հարցին եւ բռնագաղթուածների խնդիրներին:

Վերադառնալով Լոնդոն Բարոնուհի Գոքսը յօդուածներ գրեց մի շարք թերթերում եւ հարցազրոյցներ տուեց մի քանի ռադիոկայանների: Յունիսի 11ին The Daily Telegraph թերթում տրպուած յօդուածում նա գրում էր. «Մենք նախ խօսեցինք հայ գիւղացիների հետ, որոնք վերջերս բռնի տեղահանուել էին Լեռնային Ղարաբաղից եւ Ադրբեջանի այլ վայրերից: Նրանք պատմեցին, թէ ինչպէս խորհրդային բանակը եւ տխրահռչակ ադրբեջանական ՕՄՕՆը - «սեւ գլխարկաւոր» ուժը - պաշարեցին եւ ուղղաթիռներով, տանկերով ու զնդացիրներով յարձակուեցին գիւղերի վրայ: Մենք լսեցինք ականատեսների վկայութիւնները, թէ ինչպէս մարդիկ, ներառեալ մի վարդապետ, սպանուած են, տները քանդուած, սեփական ինչքերը կողոպտուած, ինչպէս կանանց ականջները կըտրել, ինչպէս կրակել են մի անդամալոյծ մարդու ոտքերին՝ նրա կընոջ առջեւ, ինչպէս են ծեծել յղի մի կնոջ եւ կրակել նրա ամուսնու բերանի մէջ, երբ փորձել է օգնել կնոջը...»:

Բարոնուհի Գոքսը այս փաստերի մասին Մոսկուայում խօսել է Ա.Լուկիանովի հետ նրանց առաջին հանդիպման ժամանակ, որտեղ կողմերը պայմանաւորուել են, որ Խ.Միութեան Գերագոյն Խորհուրդը մի խորհրդարանական պատուիրակութիւն ուղարկի Ադրբեջան եւ Հայաստան՝ տեղեկագրելու կացութեան մասին:

Կողմերը պայմանաւորուել էին մի շարք այլ կէտերի գծով եւս, որոնց մասին Լոնդոնում Լուկիանովը Բարոնուհուն յայտնել է, թէ արդէն իսկ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների երկխօսութիւնը սկսուել է, ինչպէս նաեւ Մոսկուայում սկսուել է խօսակցութիւն Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի ժողովրդական պատգամաւորների միջեւ:

Բարոնուհին, սակայն, բարձրացրել է բռնագաղթուածների տուն վերադարձի հարցը, յայտնելով, «գիտենք քաղաքական իրավիճակը բարդ է, բայց մենք մտահոգ ենք մարդկային իրաւունքների խնդրով: Մենք ուզում ենք իմանալ Լեռնային Ղարաբաղից եւ Ադրբեջանից գաղթածների վիճակի մասին: Մենք ուզում ենք իմանալ, թէ նրանք երբ պիտի կարողանան վերադառնալ իրենց տները»:

Անշուշտ Լուկիանովը «չեզոքութիւն» ցուցաբերելով յայտնել է, թէ շուրջ 200,000 բռնագաղթուածներ կան իւրաքանչիւր կողմից, թէ ըստ հայերի կենտրոնը պրո-ադրբեջանական է եւ ըստ ադրբեջանցիների՝ պրոհայկական, մինչդեռ կենտրոնը բոլորի հետ է եւ երկու հանրապետութիւնների միջեւ յաջողութեամբ ստեղծելով հինգ կիլոմետր տարածութիւնը՝ փաստօրէն նպաստում է իրադրութեան կայունացմանը, եւայլն:

Միւս կողմից, Բարոնուհի Գոքսը շարունակում է հայանպաստ աշխատանքները անգլիական խորհրդարանում եւ արդէն իսկ կապեր է հաստատել տեղի հայ գաղութի հետ: